«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ**

Հետազոտող ուսուցիչ՝Շմավոնյան Ագապի

ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝Ռ.Աղաջանյան

Արմավիր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3 էջ
Գրականության ակնարկ	4 էջ
Հետազոտական աշխատանք	12էջ
Ամփոփում	25 էջ
Գրականության ցանկ	27էջ

ՆԱԽԱԲԱՆ

Թեմայի արդիականությունը: Թեման արդիական է նրանով, որ այսօր հանրակրթական դպրոցի գործունեությունը կարող է հանգեցնել առողջ և մտածող սերնդի կրթությանը և դաստիարակությանը միայն այն դեպքում, եթե ճիշտ և համակարգված կազմակերպվեն և վերահսկվեն հանրակրթական դպրոցի թե՛ ուսումնական և թե՛ մեթոդական աշխատանքները:

Ուսումնասիրության նպատակն՝ դպրոցում ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման և վերահսկողության գործընթացների ուսումնասիրությունն ու վերլուծությունն է և այդ համատեքստում մեթոդմիավորումների գործունեության նոր մոդելի առաջարկումը:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել «դպրոց» սոցիալական ինստիտուտի գործունեության նպատակը, խնդիրները, կառուցվածքը և ներկայացնել կրթական քաղաքականությունը հանրակրթության ոլորտում:
2. Վերլուծել դպրոցի մեթոդմիավորների գործունեությունը, նպատակը, խնդիրները և մեկնաբանել ուսումնամեթոդական աշխատանքների վերահսկողության նպատակը, ձևերը:
3. ուսումնասիրել և վերլուծահամադրաբար ներկայացնել հիմնական դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքի ձևերն ու եղանակները:

Հետազոտության նորույթը.

Հիմնախնդրի վերաբերյալ բազմաթիվ սկզբնաղբյուրներ հանգամանալից վերլուծության են ենթարկվել մեր կողմից: Իրականացրել ենք նաև սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն:

Ուսումնասիրության օբյեկտը՝ հանրակրթական դպրոցն է:

Ուսումնասիրության առարկան՝ ոսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման և վերահսկողության գործընթացների ուսումնասիրություն:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հանգամանալից ուսումնասիրվել են հիմնախնդրի վերաբերյալ բազմաթիվ աղբյուրներ և վերլուծության ենթարկվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու զարգացման նախապայմաններից մեկը: Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է կրթության որակի, արդյունավետության, մատչելիության բարձրացման միջոցով: Կրթությունը կարևորվում է, որպես պետական ռազմավարական հիմնախնդիրների՝ ազգային անվտանգության, կայուն տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման, ժողովրդավարական հասարակության զարգացման, գիտելիքահեն տնտեսության կայացման, լուծման առանցքային գործոններից մեկը[1]: ՀայաստանիՀանրապետությանկրթությանհամակարգըպետականկրթականչափորոշիչների,կրթությանհաջորդականությունննապահովողտարբերմակարդակիուղղվածությանկրթականծրագրերի,ուսումնականհաստատություններիևկրթությանկառավարմանմարմիններիփոխկապակցվածամբողջությունէ:

Հանրապետությանկրթությանհամակարգնընդգրկումէ.

- ✓ պետականկրթականչափորոշիչների, կրթությանհաջորդականությունննապահովողտարբերմակարդակիևուղղվածությանկրթականծրագրերիհամալիրը,
- ✓ այդծրագրերնիրականացնողտարբերտիպիուսումնականհաստատություններիցանցը,
- ✓ կրթությանկառավարմանմարմինների, նրանցենթակայությանհիմնարկներիուհաստատություններիհամակարգը:

(«Կրթությանմասին» ՀՀօրենք, Երևան, 1999):

Հանրակրթականդպրոցումկրթականգործունեությանարդյունավետկազմակերպման,

[1]Հարությունյան Ն. Տիգրանյան Ա., «ՀՀ կրթության համակարգը, նպատակը, խնդիրները», Մանկավարժական միտք, Երևան 2016, էջ 5:

ինչպեսնաև զարգացմանծրագրերինաջակցելուև համայնքիհետարդյունավետհամագործակցությունապահովելունպատակովձևավորվումենխորհրդակցականմարմիններ՝ մանկավարժականխորհուրդ, առարկայականմեթոդականմիավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուներիխորհուրդներ: Հանրակրթականդպրոցումկարողենձևավորվելխորհրդակցականկամխորհրդատվական նայլմարմիններ:

Դպրոցի խորհրդակցական մարմին է մանկավարժականխորհուրդը, որըկազմավորվումէմանկավարժականկոլեկտիվիօգոստոսյանառաջիննիստում: Այն ձևավորվումէտնօրենիհրամանով՝ մեկուսումնականտարիժամկետով: Մանկավարժականխորհրդիանվանականկազմըարձանագրվումէմանկավարժականխորհրդիարձանագրություններիմատյանում[2]: Կա մանկավարժականխորհրդիկազմի ձևավորմաներկու սկզբունք: Առաջին սկզբունքի համաձայնքառասունմանկավարժներիցավելիհամակազմունեցողհանրակրթականդպրոցիմանկավարժականխորհրդիկազմումընդգրկվումեն՝տնօրենը, ուսումնականևդաստիարակչականաշխատանքներիգծովտնօրենիտեղակալները, առարկայականմեթոդականմիավորումներինախագահները, դասղեկները, ծնողականխորհրդի, հոգաբարձուներիխորհրդիմեկականներկայացուցիչներ, արհմիութենականկոմիտեինախագահը, առարկայականմեթոդականմիավորումներիկողմիցառաջադրված 3-5 մանկավարժներ, դաստիարակչականաշխատանքներիկազմակերպիչը, ինչպեսնաևայլխորհրդակցականմարմիններիներկայացուցիչներ:

Երկրորդ սկզբունքի համաձայն՝մինչևքառասունմանկավարժներիցկազմվածհանրակրթականդպրոցներումբոլորմանկավարժականաշխատողներըհամարվումենմանկավարժականխորհրդիանդամներ:

Մանկավարժականխորհուրդընախարարությանսահմանածկարգով, իրկազմից, գաղտնիքվեարկությամբընտրումէ դպրոցականխորհրդիանդամությանթեկնածուներ[3]:

Մանկավաժական խորհրդի գործունեությունը շատ ընդարձակ է: Այսպեսհամաձայն ՀՀկառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954-Նորոշման մանկավարժական խորհուրդը քննարկում

[2]ՀՀկառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954-Նորոշում:
[3]ՀՀկառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954-Նորոշում:

է՝հանրակրթականդպրոցիզարգացմանծրագիրըևերաշխավորումէայնխորհրդիհաստատմանը: Դպրոցի զարգացման ծրագիրը ներկայացվում է դպրոցի գործադիր մարմնի՝ տնօրենի կողմից: Եվ մանկավարժական խորհուրդը կարող է առաջարկություններ ներկայացնել և այսպիսով ուղղորդել տնօրենին դպրոցի ուսումնական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու գործում: Մանկավարժական խորհուրդը քննարկում է նաև՝ հանրակրթությանպետականչափորոշչինհամապատասխանհանրակրթականհիմնական ծրագրերիիրագործմանհարցերը՝ սովորողներիհակումներինուընդունակություններին,նրանցկյանքիևառողջությանպահպանմանըհամապատասխան, ուսուցմանբովանդակության, սովորողներիուսումնառությանորակի, նրանցհետտարվողարտադասարանականևարտադպրոցականաշխատանքներիկազմակերպմանհարցերը, հանրակրթականուսումնականառարկաներիչափորոշիչներիևծրագրերի, ուսումնականպլաններինախագծերը, ինչպեսնաևնորփորձարկվողդասագրքերը, ձեռնարկներըևայլնյութեր: Այս տեսանկյունից օժանդակելով նաև մեթոդական միավորումների գործունեության կատարմանը, հանրակրթականդպրոցումկրթականգործընթացինօժանդակողխորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկմանկավարժական, մեթոդական, առողջապահականևայլբնույթի) ծառայություններմատուցելուհարցը, ուսումնականգործընթացինվերաբերողայլհարցեր:

Ուսումնական գործընթացին վերաբերվող այս և այլ հարցերի վերաբերյալ մանկավարժականխորհուրդըորոշումներէկայացնում՝ հանրակրթականդպրոցիաշխատանքայինռեժիմիևաշխատանքայինշաբաթվատևողության, հանրակրթականդպրոցիավագդասարանիհոսքերիձևավորմանմասին, սովորողներինդասարանից-դասարան (այդթվում՝հանրակրթականդպրոցիկազմում՝ հիմնականկրթության 2-րդմակարդակից 3-րդմակարդակփոխադրվելիս) փոխադրելու, ամառայինառաջադրանքներտալուևնույնդասարանումմնալու, ավագդպրոցիփոխադրականդասարաններումտարեվերջյանքննություններսահմանելու, սովորողներինքննություններինթույլատրելու, գովասանագրովպարգևատրելու, որևէառարկայիուսումնասիրությունիցազատելու, բացակայություններիպատճառովնախատեսվածքննականառարկաներիորոշմանևքննո

ությունների հանցկացման ժամանակացույցի մասին, սովորողների ինվերաքննությունների նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու մասին, հանրակրթական դպրոցի շրջանավարտների, ընտկրթական մակարդակների հավարտական փաստաթուղթ (վկայական կամ ատեստատ) տալու, գերազանցության մեդալով պարգևատրելու, հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և ներկայացվում է տնօրենի հաստատմանը, հանրակրթական դպրոցի ուսումնական գործընթացի ներաբերողայլ հարցերի մասին:

Որպես մանկավարժական խորհրդի աշխատանքների կազմակերպիչ հանդես է գալիս դպրոցի տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը), որ նիպաշտոնեխորհրդի նախագահն է:

Կարևորվում է այն, որ մանկավարժական խորհրդի նիստերը արձանագրվեն անճշտություններից խուսափելու համար: Այդ արձանագրությունները կազմվում է մշտական քարտուղարի կողմից, որի բացակայության դեպքում ընտրվում է նորքարտուղար: Քարտուղարը պատասխանատու է մանկավարժական խորհրդի արձանագրությունների բարեխիղճ կազմման համար, նիստի արձանագրությունը՝ կազմվում է եռօրյա ժամկետում, ստորագրվում և վավերացվում է խորհրդի նախագահի կողմից:

Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Սակայն իրավիճակային փոփոխության պայմաններում կարող են գումարվել նաև արտահերթ նիստեր՝ տնօրենի, մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի, նախարարության և (կամ) տարածքային կառավարման մարմնի, Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ: Ընդունված է մեկ ուսումնական տարում կայացնել խորհրդի 5 նիստ[4]:

Ներդպրոցական ժողովրդավար կառավարման տեսանկյունից կարևոր է այն փաստը, որ մանկավարժական խորհրդի նիստերը բացեն: Իսկ դա նշանակում է, որ հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում չընդգրկված բոլոր մանկավարժները կարողեն ներկա գտնվել նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով[5]: Սովորողներին վերաբերվող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել նաև ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ և այլ անձինք: Ծնողների

[4] Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, Ե. 2005, էջ 422:
[5] ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954-Ն որոշում:

մասնակցությունը մանկավարժական խորհրդի նիստերին և ընդհանրապես դպրոցի գործունեությանը դպրոց-ընտանիք համագործակցության կարևոր տարր է:

Շատ կարևոր է մանկավարժական խորհրդի որոշումների կատարումը: Այդ որոշումների կատարումը ստուգելու համար նշանակվում են վերահսկողներ, վերջիններս ստուգում են կատարված աշխատանքները և արդյունքների մասին զեկուցում մանկավարժական խորհրդի հաջորդ նիստի ժամանակ, որին հաջորդում են քննարկումները: Աշխատանքի այս ոճը խթանում է դպրոցի մանկավարժական կոլեկտիվի գործունեությանը և լիցք հաղորդում սովորողների ուսուցմանն ու դաստիարակությանը[6]:

Այսպիսով հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման գործում դպրոցի խորհրդակցական մարմին հանդիսացող մանկավարժական խորհուրդը իր իրավասությունների շրջանակներում քննարկում և որոշումներ է կայացնում ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերվող մի շարք առանցքային հարցերի վերաբերյալ:

Ինչպես արդեն նշել ենք, հանրակրթական ուսումնականհաստատությանկրթականգործունեությանարդյունավետկազմակերպման նպատակովձևավորվումեն խորհրդակցականմարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտականխորհուրդներ, առարկայականմեթոդականմիավորումներ: Խորհրդակցական մարմինների ձևավորման կարգը ևիրավասություններըսահմանվումենուսումնականհաստատությանկանոնադրությամբ: Ուսումնականհաստատությանկանոնադրությամբկարողենննախատեսվելնաևայլխորհրդակցականմարմիններ՝ հոգաբարձուներիևայլխորհուրդներ[7]: Դրանցից յուրաքանչյուրը իրականացնում է որոշակի գործառույթներ:

Արդի ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցում իրականացվող բարեփոխումների, նորարարական մոտեցումների ներդրման, ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման գործընթացում առաջացած խնդիրների լուծման գործում զգալիորեն մեծանում է առարկայական մեթոդական միավորումների

[6]Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, Ե. 2005, էջ 424-425:
[7]Հանրակրթության մասին օրենքի հոդված 10, 5-րդ կետ:

դերը[8]: Դրանք զբաղվում են հանրակրթական դպրոցի մեթոդական աշխատանքների պլանավորմամբ և իրականացմամբ:

*Մեթոդական աշխատանքը*ուսումնական հաստատությունում մանկավարժական կոլեկտիվի և դպրոցի ղեկավարության գործունեության հիմնական ձևերից մեկն է[9]:

Ինչպես նշված է ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդական միավորման Օրինակելի Կանոնադրության մեջ. «Առարկայական մեթոդական միավորումները ստեղծվում են հանրակրթական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով»: Այս առումով, որպես դպրոցի զարգացման կարևոր նախապայման կարևորվում է մեթոդական միավորումների գործունեության արդյունավետության բարձրացումը և հետագա կատարելագործումը:

Մեթոդական միավորումների գործունեության հիմնական խնդիրներն են՝

- մեթոդաբանության կատարելագործում, անցկացվող բոլոր ուսումնական պարապմունքների որակի և արդյունավետության բարձրացում,
- ղեկավարող և դասավանդող անձնակազմի մանկավարժական վարպետության բարձրացում,
- կրթական գործընթացի կազմակերպման և ապահովման կատարելագործում[10]:

Մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Հակառակ դեպքում ստեղծվում են մեթոդմիավորումներ հարակից առարկաների ուսուցիչներից[11]: Կարծում ենք, որ վերոնշյալը օրինաչափ է, եթե խոսքը վերաբերվում է հենց տրամաբանական կապ ունեցող առարկաներին: Չի կարելի շեղել այս դրույթը մեթոդական աշխատանքները առավել համակարգված կազմակերպելու համար:

Համաձայն ՀՀկառավարության2017թ.-ի հուլիսի 6-ի N 801 որոշման առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը.

---

[8]Առաքելյան Մ. «Առարկայական մեթոդական միավորումների գործունեության հիմնական ուղղությունները արդի պայմաններում», Մանկավարժական միտք ամսագիր, Տաթև Գիտակրթական համալիր, Երևան 2015թ. N 3, էջ 112:

[9]Միրզոյան Ա., Բեգջանյան Ռ., Մխեյան Գ., «Ներդպրոցական վերահսկողության պլանավորում և իրականացում», Երևան 2014թ., էջ 9:

[10]Միրզոյան Ա., Բեգջանյան Ռ., Մխեյան Գ., «Ներդպրոցական վերահսկողության պլանավորում և իրականացում», Երևան 2014թ., էջ 10:

[11]«Հայաստանիհանրապետությանպետականհանրակրթականուսումնականհաստատություն» պետականոչառևտրայինկազմակերպության Օրինակելի Կանոնադրություն, Գլուխ 5, կետ 91 ՀՀկառավարության2017թ.-ի հուլիսի 6-ի N 801 որոշում:

▪ Քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերը, ուսումնական պլանները, նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և այդ քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին /դասվարներին/ տալիս երաշխավորություններ: Առարկայական մեթոդական միավորումը պատասխանատու է տվյալ առարկայի համար սահմանված պետական ծրագրի կատարման համար և շարունակ վերահսկում է այդ գործընթացը:

▪ Մեթոդական միավորումները ժամանակակից դպրոցում հանդես են գալիս նաև որպես ուսումնական նյութի (դասագրքեր, ձեռնարկներ) ստեղծող և գնահատող: Այդ գործընթացը շարունակական է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աստիճանաբար ավելանում և ավելանալու են ուսումնական նյութերը՝ այլընտրանքային դասագրքեր, էլեկտրոնային աղբյուրներ, ձեռնարկներ, շատ կարևոր է, որ ուսուցիչն իմանա այն չափանիշները, որոնցով պետք է գնահատի և ընտրի ուսումնական նյութը: Գնահատման ընդհանրական չափանիշն այն է, որ ուսումնական նյութերը պետք է համապատասխանեն աշակերտների կրթական մակարդակին, տարիքային առանձնահատկություններին և այլնին[12]: Մեթոդական միավորումը սահմանված կարգով կազմակերպում է նաև դասագրքերի փորձաքննություն:

▪ ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և ներդնում պրակտիկ աշխատանքում: Այս տեսանկյունից համակարծիք ենք Մարինե Առաքելյանի հետ, ով նշում է, որ մեթոդական միավորումների արդյունավետ գործունեությունը պայմանավորված է անհրաժեշտ մանկավարժական պայմանների հաշվառմամբ, որոնք են՝ անցյալի մանկավարժական փորձի վերլուծությունը և դրա հիման վրա դպրոցի զարգացման միտումների որոշակիացումը, դպրոցի նկատմամբ պետության ու հասարակության պահանջների և կրթական համակարգի կառավարման սուբյեկտների գործունեության նպատակների համապատասխանությունը և այլն:

▪ նպաստում է ուսուցիչների /դասվարների/ որակավորման բարձրացմանը և որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին /դասվարներին/

[12] Л. П. Крившенко, Педагогика: у еб. /Л. П. Крившенко и др., подред., М., Проспект, 2009, с. 266.

նախապատրաստում է ատեստավորման[13]: Ուսուցիչների ատեստավորման և վերապատրաստման անհրաժեշտությանը կանրադառնանք հաջորդ գլխում:

Դպրոցի մեթոդական միավորումը իրականացնում է այլ գործառույթներ ևս՝ կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական, խորհրդակցություններ, խորհրդատվություններ: Սրանց հիմնական նպատակը ուսուցիչների իրազեկումն ու ուղղորդումն է: Մեթոդական միավորումը նաև ուսուցիչներին /դասվարներին/ հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ, մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո առաջարկություն է ներկայացնում հանրակրթական դպրոցի տնօրենին՝ ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման մասին, կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին, կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ: Այսինքն մեթոդական միավորումները պետք է ծավալուն աշխատանք տանեն դպրոցում աշակերտների զարգացման ուղղությամբ: Եվ այս նպատակով պետք է հաճախակի կազմակերպվեն տարբեր բնույթի միջոցառումներ:

Մեթոդմիավորման աշխատանքը գնահատվում է ինչպես մասնախմբում՝ հենց մասնախմբի անդամների կողմից, այնպես էլ մանկավարժական խորհրդի նիստում, ընդ որում՝ այդ գնահատման համար հիմք է հանդիսանում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի վերլուծությունը՝ ըստ նախորդ ուսումնական տարվա ընթացիկ, համադպրոցական, տարածքային, նախարարության կողմից անցկացված ստուգողական աշխատանքների, տեսչական ստուգումների արդյունքների, իսկ «վերլուծությունները և գնահատումները նախատեսված են ուսուցիչների և աշակերտների գործունեության խթանման համար»[14]:Ընդհանուր առմամբ համակարծիք լինելով Մարինե Առաքելյանի հետ, նշենք, որ մանկավարժների մեթոդական միավորման գործունեությունն անհրաժեշտ է և կարևոր դեր ունի առարկայի դասավանդման մեթոդների կիրառման արդյունավետության, առանձին

[13]Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց/ ՀՀ ԿԳՆ կազմ.՝Գ. Մելիքյան, Ն. Մանուկյան, Վ. Սարգսյան.-Եր.: Կրթության ազգային ինստիտուտ, 2012 Պրակ IV. էջ 76:

[14]Шамова Т. И., Управление образовательными системами: Учеб. Пособие для студ. высш. пед. учеб. Заведений /Т. И. Шамова, Т. М. Давыденко, Г. Н. Шибанова, Подред. Т. И. Шамовой, М., Издательский центр, ''Академия'', 2002, с236.

տեխնոլոգիաներին տիրապետելու, մանկավարժական գործունության խթանման, ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության, նրա առանձին տարրերի յուրացման համար:Մեթոդմիավորումների համակարգված ու նպատակաուղղված գործունեությունը նպաստում է մանկավարժական կադրերի մասնագիտական զարգացմանը, մանկավարժական առաջավոր փորձի ներդրմանը և այլնին:
3. Մեթոդական միավորումները դպրոցում իրականացնում են մի շարք գործառույթներ և լուծում են բազմաթիվ խնդիրներ: Մեթոդական միավորման գործունեությունն անհրաժեշտ է և կարևոր դեր ունի առարկայի դասավանդման մեթոդների կիրառման արդյունավետության, առանձին տեխնոլոգիաներին տիրապետելու, մանկավարժական գործունության խթանման, ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության, նրա առանձին տարրերի յուրացման համար:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանք

Հետազոտվող անձանց քանակը՝80 ուսուցիչ

Հետազոտվող անձանց տարիքը՝ 30-65

Ուսումնասիրման նպատակը – բացահայտել դպրոցի մեթոդմիավորման գործունեությունը:

Հետազոտության օբյեկտը՝դպրոցի մեթոդմիավորման աշխատանքը:

Հետազոտության առարկան՝ դպրոցի մեթոդմիավորման աշխատանքի ձևերն ու եղանակները դպրոցում:

Հիմնախնդրի սահմանումըԲացահայտել դպրոցի մեթոդմիավորման գործունեության առանձնահատկությունները:

<u>Հետազոտության նպատակ</u>Ուսումնասիրել դպրոցի մեթոդմիավորման աշխատանքը և բացահայտել, թե որքանով է արդյունավետ աշխատում դպրոցում:

<u>Հետազոտության խնդիրներն են՝</u>

- բացահայտել դպրոցի մեթոդմիավորման գործառույթները և իրականացրած գործունեությունը,
- պարզել մեթոդմիավորման աշխատանքային բովանդակությունը,
- բացահայտել մեթոդմիավորման ինստիտուտի դերը դպրոցի զարգացման, ուսուցիչների կատարելագործման գործընթացում:

Հետազոտության ժամանակ կիրառել ենք գիտական հետազոտության մեթոդախմբի մեջ մտնող հարցման մեթոդը, մասնավորապես հարցաթերթիկային հարցումը, որըզրուցավարի (ինտերվյուեր) և հարցվողի (ռեսպոնդենտ) միջև ենթադրում է անմիջական առնչություն: Ըստ որում՝ հարցվողի պատասխանների գրանցումը կատարվում է կա՛մ զրուցավարի կողմից, կա՛մ սարքի միջոցով:Հարցնողը, ելնելով իրավիճակից, նախաձեռնողաբար պետք է հարցվողի հետ որոնի և գտնի հաղորդակցման եզրեր, մտովի կառուցի կամ վերակառուցի հարցման պլանը: Կենդանի, անմիջական հաղորդակցությունը հարցվողի հետ ստեղծում է հոգեհուզական մտերմիկ այն մթնոլորտը, որի շնորհիվ ստացվում է անհրաժեշտ տեղեկությունը՝ որոշ դեպքերում ավելի հավաստի: Տեղեկատվության ստացման համար նպատակահարմար է կիրառել փորձագիտական հարցման և հարցաթերթիկների կիրառումը, որոնք մեզ թույլ կտան բացահայտելու և վերլուծելու երևույթի ամբողջական պատկերը: Որակական հետազոտությունների ընտրանքի ծավալը որոշելիս պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝ հետազոտության նպատակը, ընտրանք իրականացման իրատեսական լինելը:

Մեր հետազոտության համար՝ որպես մեթոդաբանական հիմք, ընդունել ենք հարցաթերթիկը: Այն՝ որպես որևէ երևույթի կամ օբյեկտի ուսումնասիրության մեթոդ, մարդուն շրջապատող միջավայրի թերևս ամենահին ու ամենատարածված ձևն է: Միաժամանակ հարցաթերթիկը իրավիճակը, իրողությունը ընկալելու ճանաչելու կարևոր և անհրաժեշտ նախապայմաններից մեկն է: Հարցաթերթիկը սովորական զրույցից տարբերվում է նրանով, որ իրականացվում է հաջորդականորեն՝ որոշակի ծրագրով և որոշակի նպատակով:

Հետազոտության առաջին փուլում իրականացրել ենք հարցում աշակերտների ծնողների հետ:

ՀԱՐՑ 1. «Ի՞նչ հաճախականությամբ են դպրոցում կազմակերպվում մեթոդմիավորման նիստերը» հարցին առաջադրել ենք պատասխանի հետևյալ տարբերակները.

ա. ամիսը մեկ անգամ,

բ. ամիսը երկու անգամ,

գ. ամեն շաբաթ,

դ. երկու ամիսը մեկ:



Տրամագիր 1.

Արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների գերակշիռ մասի՝ ուսուցիչների 75 տոկոսի փաստմամբ ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող գլխավոր կառույցի՝ առարկայական մեթոդմիավորման հանդիպումներն իրականացվում են ամիսը երկու անգամ, 25 տոկոսը այդ աշխատանքների իրականացմանը մասնակցում է երկու ամիսը մեկ կտրվածքով:Ասել է թե՝ մեթոդմիավորումների աշխատանքային գործունեությունն առավելապես կանոնակարգված բնույթ ունի և արդյունավետության տեսանկյունից անցկացվում է ամենամսյա ձևաչափով՝ բովանդակելով ուսումնական գործընթացի բոլոր փուլերին առնչվող հարցերն ու խնդիրները:Կարծում ենք՝ անպայմանորեն անհրաժեշտ է առարկայական մեթոդմիավորման նիստերը կազմակերպել ամիսը առնվազն երկու անգամ՝ ներառելով նաև գործնական դասեր,

առարկայական արտադասարանական միջոցառումներ, գիտագործնական համաժողովներ, մեթոդական փառատոներ և այլ միջոցառումներ:

Պետք է քայլեր ձեռնարկել առարկայական մեթոդմիավորումների միավորված նիստեր անցկացնելու, որոնց քննարկումային բնույթը կնպաստի ուսումնական գործընթացի տարբեր խնդիրների վերհանմանն ու լուծման ուղիների առաջադրմանը:

Ուսուցիչների մեթոդական աշխատանքը մանկավարժական պարտադիր երևույթ է, որտեղ դպրոցի ղեկավարների և ուսուցիչների մանկավարժական համագործակցությունն է դրսևորվում: Եթե այդ համագործակցությունը չկա, բացակայում է, ապա ուսուցիչը չի կարող որպես սոցիալական միջնորդ հանդես գալ երեխայի հետ փոխհարաբերությունների համակարգում, որտեղ յուրաքանչյուրը ստանձնում է տարբեր սոցիալական դերեր, փոխլրացնելով իրականացնում օբյեկտ-սուբյեկտային, սուբյեկտ–սուբյեկտային փոխհարաբերություններ:

Ուսուցիչների ուղղված հաջորդ հարցին, թե «ովքե՞ր են մասնակցում մեթոդմիավորման աշխատանքներին»(ՀԱՐՑ 2), առաջադրել ենք այսպիսի տարբերակներ.

Ա) մեթոդական միավորման անդամները,

Բ) դպրոցի փոխտնօրենը և մեթոդմիավորման անդամները,

Գ) դպրոցի տնօրենն ու մեթոդմիավորման անդամները,

Դ) մեթոդմիավորման ոչ բոլոր անդամները:

Հարցված 80 ծնողներից ոչ ոք չի ընտրել չորրորդ տարբերակը: Բ տարբերակը ընտրել է 45 ուսուցիչ, գ տարբերակը՝ 25 ուսուցիչ, իսկ դ տարբերակը՝ 10 ուսուցիչ, ինչը նշանակում է, որ մեթոդմիավորման նիստերը հիմնականում վերահսկվում են փոխտնօրենի կողմից: Խրախուսելի է, որ մեթոդմիավորման բոլոր անդամները ամենայն պատասխանատվությամբ են մոտենում իրենց աշխատանքին և մասնակցում են մեթոդմիավորման բոլոր նիստերին և միջոցառումներին:Հարկ է նկատել, որ նման ցուցանիշներ ստացել ենք այն պարագայում, երբ բոլոր ուսուցիչներն են հստակորեն պատկերացնում մեթոդմիավորման գործառույթները:

Հաջորդ հարցմանը՝«առավելապես ի՞նչ խնդիրներ են բարձրացնում մեթոդմիավորման նիստերը» (ՀԱՐՑ 3), առաջադրել ենք պատասխանի հետևյալ տարբերակները.

Ա. Դասաբաշխման, ուսպլաններին, ծրագրերի կատարողականությանն առնչվող հարցեր,

Բ.նյութատեխնիկական բազային և դիդակտիկ պարագաներին առնչվող հարցեր,

Գ. Դասալսումների կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցեր,

Դ, նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում:



Տրամագիր 2.

Ուսուցիչների 40-ի տոկոսի կարծիքով մեթոդմիավորման գործունեությունն առավելապես առնչվում է դասալսումներին, որոնց անցկացման ընթացքում քննարկվում են առարկայի տեսական ու դասավանդման, ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրման ու ուսումնական գործընթացին առնչվող տարբեր խնդիրների բացահայտման, դրանց լուծման ուղիների առաջադրման հարցեր: 13 տոկոսը մեթոդմիավորման գործունեության հիմքում դնում է նյութատեխնիկական բազային ու դիդակտիկ պարագաներին առնչվող հարցերը: ուսուցիչների 25 տոկոսը մեթոդմիավորման աշխատանքը համարում է նախորդ ամսվա գործունեությանն առնչվող ամփոփիչ քննարկում: Ուսուցիչների 22 տոկոսը մեթոդմիավորման աշխատանքի բովանդակության հիմքում դնում է դասաբաշխմանը, ուսկլաններին, կատարողականին առնչվող հարցերը:

Ինչպես տեսնում ենք, հարցման արդյունքները բազմակողմանիորեն են բացահայտում մեթոդմիավորման իրականացրած գործառույթների շրջանակը, սակայն հարկ է նկատել, որ առաջադրված բոլոր տարբերակների ներառումը մեթոդմիավորման

աշխատանքում կարևորվում է և առավելապես պիտի կախված լինի իրականացման ժամանակահատվածից: Արդյունավերտ կլինի նշված բոլոր բաղադրիչների կարևորումը ուսումնամեթոդական աշխատանքներում:

Չորրորդ հարցին, թե ով է ղեկավարում մեթոդմիավորման աշխատանքները (ՀԱՐՑ 4), առաջադրվել են հետևյալ տարբերակները.

Ա) մեթոդմիրավորման նախագահը,

Բ) փոխտնօրենը,

Գ) ուսուցիչներից որևէ մեկը:

Հարցված ուսուցիչներից 55-ը փաստում են, որ մեթոդմիավորման աշխատանքերը ղեկավարում է մեթոդմիավորման նախագահը:Ընդ որում, նրանք չեն բացառում տնօրենի կամ փոխտնօրենի մասնակցության գործոնը: 25 ուսուցիչ նշում է, որ մեթոդմիավորման աշխատանքներին մասնակցում և ղեկավարում է փոխտնօրենը:

Ա տարբերակն ընտրող ուսուցիչները քաջատեղյակ են մեթոդմիավորման նախագահի, իրականացրած դերի, գործառույթների մասին: Այս ուսուցիչները գիտեն, որ մեթոդմիավորման նախագահը կարող է իրենց օգնել ընկալել ուսումնական գործընթացում առաջ եկած խնդիրները և դրանց բավարարման համար անհրաժեշտ միջոցները, տրամադրել իրենց ընտանիքին անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն, խթանել դպրոցի միջոցառումներին իրենց մասնակցությունը,ապահովել իրենց՝ ուսուցիչների մասնակցությունը կրթական ծրագրերի կազմման գործին և այլն: Այսինքն՝ մեթոդմիավորման նախագահը իրենց կարող է տրամադրել բազմատեսակ օգնություն: Հարցման մյուս պատասխանը շեշտադրում է փոխտնօրենի վերահսկողությունը դպրոցի մեթոդմիավորման աշխատանքներին, ինչը կարևորվում է ներդպրոցական վերահսկողության տիրույթում: Այսպիսի գործընթացներում հիմնախնդիրները կարող են առանձնացվել, մեկնաբանվել, տարբերակվել, բավականաչափ համակարգվել ըստ առաջացման պատճառների, հետևանքների, հստակ սահմանազատվել, որը կնպաստի սովորողի անձի ձևավորման, սոցիալականացման, զարգացման հետ կապված դժվարությունների, հակասությունների, խնդիրների հաղթահարմանը, նպատակադրված բարեփոխումների ուղղվածության կարգավորմանը, իրականացման ակտիվացմանը, նորարարությունների խթանմանը: Այսինքն՝ դպրոցներում ղեկավարներից որևէ մեկի մասնակցությունը ուսումնամեթոդական աշխատանքիննպատակահարմար և լավ կլինի՝ կրի պարտադիր բնույթ:

Հինգերորդ հարցին՝ ինչպե՞ս եք գնահատում մեթոդմիավորման նախագահի գործունեությունը դպրոցի ուսումնական գործընթացի բարելավման առումով, առաջադրել ենք պատասխանի այսպիսի տարբերակներ:

Ա) գերազանց,

Բ) լավ,

Գ) բավարար

Դ)դժվարանում եմ պատասխանել:

Հարցվող ուսուցիչներից 45-ը մեթոդմիավորման նախագահի աշխատանքը գնահատել է լավ, 16-ը տվել է գերազանց գնահատական, 11-ը բավարար է գնահատել, ուսուցիչներից 7-ը դժվարացել է որևէ գնահատական տալ մեթոդմիավորման նախագահի գործունեությանը:

Հարցվածներից 20 տոկոսն ընտրել է Ա տարբերակը: Մյուս ստացված տվյալները մտահոգիչ են այն առումով, որ ուսումնամեթոդական աշխատանքի արդյունավետ գործունեության բարձրացման խնդիր կա: Ուսուցիչների 57 տոկոսիր կարծիքով մեթոդմիավորման գործունեության բարելավման խնդիր կա, քանի որ բացթողումները նկատի ունենալով են պատասխանի նման տարբերակ ընտրել: Առավել մտահոգիչ են մեթոդմիավորման գործունեությանը տրված բավարար և անորոշ գնահատումները: Այստեղ հարց է առաջանում՝ արդյոք ուսուցիչները լիարժեքորեն տեսնում են իրենց առջևև ծառացած խնդիրները մեթոդմիավորման աշխատանքի շրջանակում, թե նրանց դուր չի գալիս անցկացման բնույթն ու ձևաչափը:

Այս առումով դպրոցի ղեկավարությունը պիտի հետևողական լինի, որ մեթոդմիավորման աշխատանքը ծառայի իր նպատակին, իր յուրաքանչյուր ուսուցիչ այն հստակ գիտակցումն ունենա, որ ինքը կարող է նպաստել դպրոցի առաջընթացին ու ուսումնական գործընթացի կատարելագործմանը:

Վեցերորդ հարցին՝ արդյո՞ք արդյունավետ եք համարում մեթոդմիավորման գործունեությունը, առաջադրվել է պատասխանի երեք տարբերակ՝

Ա) այո,

Բ) ոչ,

Գ) դժվարանում եմ պատասխանել:

Նշված հարցին ծնողների57 տոկոսն ընտրել է Ա տարբերակը, 11 տոկոսն ընտրել է Բ տարբերակը, իսկ 12 տոկոսն ընտրել է Գ տարբերակը: Կարելի է ասել, որ մեթոդմիավորման գործունեությունը ուսուցիչների կեսից ավելին գնահատում է արդյունավետ:



Տրամագիր 3.

Ա տարբերակը ընտրող ուսուցիչների կարծիքով մեթոդմիավորման աշխատանքը տալիս է ցանկալի արդյունք, իսկ երկրորդ տարբերակն ընտրած ուսուցիչները թերահավատորեն են վերաբերվում մեթոդմիավորման գործունեությանը: Սա խոսում է այն մասին, որ կան այնպիսի մանկավարժներ, որոնց մոտ մեթոդմիավորման գործունեությունը վստահություն և արժանահավատություն չի ներշնչում, և այս առումով դպրոցը անելիքներ ունի: Վերոնշյալ հարցին պատասխանների երրորդ տարբերակն ընտրած ուսուցիչները դժվարանում են հարցին հստակ պատասխան տալ, քանի որմեկնաբանում են, որ միշտ չէ, երբ մեթոդմիավորման հետ համագործակցության մեջ են, և մասնագետները նույնպես չեն ապահովում այդ փոխադարձ կապը, ինչը պատճառ է դառնում մի շարք այլ՝ հավելյալ խնդիրների առաջացմանը: Այս դեպքում, իհարկե, շատ մեծ է ուսումնական հաստատության դերը: Վերջինս պիտի համագործակցության եզրեր դնի ուսուցչի և մեթոդմիավորման միջև, բոլոր ուսուցիչները սկզբունքորեն միասնական մոտեցում պիտի ցուցաբերեն դպրոցականի կրթության, դաստիարակության, առհասարակ սոցիալականացման գործընթացում ի հայտ եկող բազմաբնույթ խնդիրներին:

Ծնողներին ուղղված յոթերորդ հարցին, թե ինչ թերություններ կամ առավելություններ են մեթոդմիավորման աշխատանքում, ստացել ենք հետաքրքիր պատկեր: Նախ նշենք, որ նշված հարցի համար տարբերակներ չենք առաջադրել՝

հիմնավոր և պատճառաբանված պատասխաններ ստանալու համար: Սակայն մանկավարժները պատասխանները տվել են առանց հիմնավորման:



Տրամագիր 4

Հարցվածներից 76 տոկոսը նշել է, որ չեն կարող նշել թերություններ: Այսինքն՝ մեթոդմիավորման գործունեությունը այդ ուսուցիչներին բավարարում է: Հարցվածների 24 տոկոսը մեկնաբանում որպես թերություն են դիտարկում այն հանգամանքը, որ մեթոդմիավորման աշխատանքը ոչ միշտ է իրենց հուզուղ ուսումնական խնդիրը բովանդակում: Ուսուցիչներից մի քանիսը առհասարակ անտարբեր են մեթոդմիավորման աշխատանքներին:Հուսանք, որ հարցման արդյունքում ստացված ցուցանիշները հետագայում փոփոխություն կկրեն, և հանրակրթական դպրոցներում բոլոր ուսուցիչները կգնահատեն մեթոդմիավորման գործունեությունը, իսկ երջինսլավագույնս կիրականացնի իր առջև դրված խնդիրները:

Ուսուցիչներին ուղղված ութերորդ հարցին՝ «Որքանո՞վ եք մեթոդմիավորման աշխատանքը նպաստում ուսումնական գործընթացի բարելավմանը» առաջադրվել ենք պատասխանի երեք տարբերակներ՝

Ա) լավ,

Բ) բավարար,

Գ) անբավարար:

Ուսուցիչների67 տոկոսը լավ գնահատական է տվել մեթոդմիավորման գործունեությանը, իսկ 28 տոկոսը՝ բավարար, ուսուցիչների 5 տոկոսը անբավարար է գնահատում մեթոդմիավորման գործունեությունը ուսումնական գործընթացը բարելավելու առումով: Սա կարող է վկայել այն մասին, որ կան ուսուցիչներ, որոնք դեռևս ծանոթ չեն մեթոդմիավորման գործառույթներին և նրա ծավալած գործունեությանը: Դա կարող է պատճառ լինել, որ ուսուցիչի և մեթոդմիավորման միջև համագործակցության եզրեր չստեղծվեն: Սա կարող է նաև փաստել այն մասին, որ միգուցե այդ ուսուցիչները թերանում են իրենց գործունեության մեջ: Այս առումով պետք է միջոցներ ստեղծել ուսուցիչների վերապատրաստման, որակավորման բարձրացման, նրա կատարած աշխատանքի գնահատման ուղղությամբ: Միայն այդպես հնարավոր կլինի լրացնել առկա բացերը և ճիշտ լուծում տալ դպրոցականների ուսումնական գործընթացում առկա խնդիրներին:

Իններորդ հարցին, թե մեթոդմիավորման աշխատանքը արդյոք ներառում է ուսուցիչների վերապատրաստմանն առնչվող հարցեր, քննարկումներ: Հարցված ուսուցիչները այս հարցին պատասխանել են, որ նշված թեմայովհաճախ անցկացնում են խորհրդատվություն, քննարկում: Ստացել ենք այսպիսի հետաքրքիր պատկեր: Ուսուցիչների 84 տոկոսը փաստել է, որ մեթոդմիավորումը հաճախակի է անդրադառնում ուսուցիչների վերապատրաստմանն առնչվող հարցերին, իսկ 16 տոկոսը տվել է բացասական պատասխան՝ հիմնավորելով, որ ուսուցիչների կատարելագործման, մասնագիտական զարգացմանն ուղղված քայլեր չեն տեսնում մեթոդմիավորման աշխատանքում:

Որքան բազմազան լինեն մեթոդմիավորման կողմից ուսուցիչների վերապատրաստմանն ուղղված ջանքերը, այնքան ավելի արդյունավետորեն կարող է այնհասնել իր առջև դրված խնդրի կամ խնդրի որևէ մասի լուծմանը:

Տասներորդ հարցին, թե ինչ ձևաչափով են անցկացվում մեթոդմիավորման աշխատանքները, առաջադրել ենք պատասխանի հետևյալ տարբերակները.

Ա. Քննարկում կամ հանդիպում կլոր սեղանի շուրջ,

Բ. մեթոդական գաղափարների տոնավաճառ,

Գ. Սեմինար կամ դասախոսություն,

Դ.կազմակերպման այլ ձևեր:

Այս հարցին մանկավարժներից 52 տոկոսը պատասխանել է, որ մեթոդմիավորման աշխատանքն առավելապես կազմակերպվում է բազմաբովանդակ քննարկումային

ձևաչափով, իսկ 34 տոկոսը մեթոդմիավորման գործունեությունը բնորոշել է որպես մեթոդական գաղափարների տոնավաճառ: Մանկավարժների8 տոկոսը մեթոդմիավորման աշխատանքի կազմակերպման ձևը դիտարկում է որպես սեմինար կամ դասախոսություն, իսկ 6 տոկոսը կազմակերպման այլ ձևեր է մատնանշում՝ կոլեկտիվ ժամ, բանավեճ և այլն: Հարցման արդյունքները փաստում են մեթոդմիավորման աշխատանքը կազմակերպվում է բազմաձև՝ առաջադրված խնդիրներին ու հարցերին համապատասխան:

Մեթոդմիավորման աշխատանքը հատկապես դպրոցում մեծ դերակատարում ունի,քանիորաշխատանքներեն տարվում ոչ միայն ուսումնական գործընթացի, այլսովորողներիհարմարման ու սոցիալականացմանուղղությամբ, մեթոդմիավորումը աջակցումէդպրոցումբարենպաստհոգեբանականմթնոլորտիստեղծմանը, կանխումէդպրոցականիհոգեկանգործընթացների, վիճակներիդժվարություններընեշեղումները, հայտնաբերումէանձիկայացմանընխոչընդոտողպայմանները, նպաստումայդխնդիրներիլուծմաննուհաղթահարմանը: Շատ կարևոր է, որ մանկավարժներ մշտապես կապ պահեն մեթոդմիավորման հետ, լինեն այդ թիմի անդամ,իրականացնեն երեխաների սոցիալականացմանն առնչվողբազմաբնույթուսումնասիրություններևդիտարկումներ:

Հաշվիառնելովսովորողիանհատականևսեռատարիքայինառանձնահատկություն ները, ըստանհրաժեշտության, պետք է ձեռնարկել դպրոցականիսոցիալականացմաննուղղվածկարիքներիհաղթահարմանմիջոցառումներ , մասնակցել օժտվածերեխաներիբացահայտմանևկրթությանառանձնահատուկպայմաններիկարիքո ւնեցողերեխաներիանհատականուսումնականպլաններիմշակմանևիրականացմանգոր ծընթացին: Միայն այդ դեպքում համատեղ աշխատանքի արդյունավետությունը բարձր կլինի:

Հաջորդ հարցին՝ ի՞նչ հանձնարարություններ են տրվում ուսուցիչներին մեթոդմիավորումների աշխատանքի շրջանակում,առաջադրել ենք պատասխանի հետևյալ տարբերակները.

Ա. ստուգիչ նյութերի, թեստերի կազմում,

Բ. դիդակտիկ նյութերի պատրաստում,

Գ. որոշակի թեմաներով հետազոտությունների անցկացում,

Դ. արտադասարանական միջոցառումների կազմակերպում:

Ուշագրավ է, որ ուսուցիչների հետ աշխատելիս մեթոդմիավորումը հիմնականում ուշադրությունը բևեռում է թեստերի, ստուգիչ նյութերի, պլանների, դիդակտիկ նյութերի պատրաստման վրա, արտադասարանական միջոցառումներին ու որոշակի թեմաներով հետազոտություններին շատ քիչ տեղ է տրվում: 46 տոկոսի կարծիքով ուսուցիչներին տրվում են դիդակտիկ նյութերի, 29 տոկոսի կարծիքով՝ ստուգիչ նյութերի, թեստերի կազմման հանձնարարություններ: Հարցման մյուս պատասխանները տվել է ուսուցիչների տաս տոկոսը:

Վերջին հարցին, մեթոդմիավորումների աշխատանքում ինչի՞ն է կարևորություն տրվում, չենք առաջադրել պատասխանի տարբերակներ: Ուսուցիչները իրենք են նշել պատասխանները: Ստացել ենք այսպիսի պատկեր.

Ուշագրավ է, որ մանկավարժները պատկերացնում և գնահատում են մեթոդմիավորման դերն առաջին հերթին իրենցինքնակրթության /45 տոկոս/, հմասնագիտական հմտությունների կատարելգործման առումով /16 տոկոս/: 29 տոկոսը մեթոդմիավորման աշխատանքի կարևորությունը տեսնում է ուսումնական գործընթացում առաջացած խնդիրների լուծման առումով: 10 տոկոսը այդ կարևորությունը համարում է համագործակցային աշխատանքը:

Կատարված հարցման արդյունքները փաստում են, որ ուսուցիչների մեծ մասը գնահատում է մեթոդմիավորման աշխատանքը՝ այն դիտարկելով որես ոչ միայն մասնագիտական հմտությունների կատարելագործման, այլև դպրոցին առնչվող բազմաթիվ խնդիրների լուծման առումով:Մանկավարժներից ոմանք թերահավատորեն են մոտենում մեթոդմիավորման գործունեության արդյունավետությանը, սա նշանակում է, որ մեթոդմիավորման աշխատանքը բարելավման կարիք ունի, ինչպես նաև ուսուցիչներին համալիր կերպով պիտի ներգրավի իր աշխատանքներում՝ հաշվի առնելով նրանք կարծիքներն ու տեսակետները:

Մեթոդմիավորումները աշխատանքի կազմակերպման ձևերը պետք է բխեն ուսումնական գործընթացի առանձնահատկություններից և խնդիրներից և չպետք է ձևական բնույթ կրեն: Դպրոցին առնչվող հարցերում մեթոդմիավորումը մեծ տեղ պիտի ատկացնի արտադասարանական աշխատանքներին և ուսուցիչների կողմից անցկացվող առանձին հետազոտական աշխատանքներին, որոնք առավել ցայտուն կբացահայտեն առկա խնդիրները՝ կանխորոշելով դրանց լուծման ուղիներ: Աշխատանքային պլանում պիտի առանձնացնել առանձին ուղղություններ և

աշխատանք տանել ոչ միայն ընդհանուր, այլև մանկավարժական առանձին հարցերի շուրջ:

Սույն հետազոտության հիման վրա ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

1. բացահայտել և համախմբել մասնագիտական զարգացման ծրագրերի արդյունքում հաջողության հասած ուսուցիչներին և տարածել նրանց փորձը,
2. ուսուցիչներին ցուցաբերվող մասնագիտական աջակցությունն առավել օգտակար դարձնելու համար բոլոր ուսուցիչների հետ չտանել միատեսակ աշխատանք,
3. իրականացնել ուսուցիչների մասնագիտական զարգացման թեմատիկ դասընթացներ՝ հիմնվելով ուսուցիչների կարիքների ու մասնագիտական պատրաստվածության վրա,
4. վերապատրաստման դասընթացներից զատ՝ կիրառել մասնագիտական զարգացման դպրոցահեն ձևեր, օրինակ՝ այցելություններ այլ դպրոցներ, դասերի խմբային վերլուծություններ, փորձի փոխանակման քննարկումներ, բանավեճեր, կոնֆերանսներ,
5. սահմաներ դպրոցի կրթության բովանդակության ուղենիշներ՝ բոլոր առարկաների ուսուցումը նպատակաուղղելով դրանց իրագործմանը,
6. ուժեղացնել ուսուցիչների կարողությունները կրթության բովանդակության, դասապլանների մշակման առումով՝ հաշվի առնելով ուսուցման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները,
7. կազմակերպել դպրոցականների հետ հաղորդակցվելու մշակույթին վերաբերող քննարկումներ,
8. կազմակերպել տեղեկատվական տեխնոլոգիաների՝ ուսումնական գործընթացում կիրառելուն առնչվող դասընթացներ, քննարկումներ,
9. ավելացնել արտադասարանական միջոցառումների թիվը,
10. զարկ տալ ուսումնական գործընթացում ի հայտ եկող տարբեր հարցերին առնչվող հետազոտությունների անցկացմանը,
11. մեթոդական աշխատանքը կառուցել մանկավարժական ծառացած խնդիրների շուրջ,
12. ավելացնել նպատակային փոխադարձ դասալսումների թիվը,
13. սկսնակ ուսուցիչների հետ տանել առանձին աշխատանք:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հանգամանորեն ուսումնասիրելով հիմնախնդիրը հանգեցինք հետևյալ եզրակացությունների՝

1. Դպրոցի գործունեությունը հիմնված է ժողովրդավարության սկզբունքի վրա և նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության կողմնորոշմանը:
2. Հանրակրթության ոլորտի առաջընթացի կարևոր նախապայման է բոլոր շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությունը, ինչը կարող է ապահովվել միայն առավել թափանցիկ միջավայրում և բաց հաշվետվողականության պայմաններում:
3. Հանրակրթական դպրոցի կառավարումն արդյունավետ իրականացնելու համար կարևոր են կառավարման տեսությունների, սկզբունքների, գործառույթների, մեթոդների, ոճերի իմացություն և պրակտիկայում նպատակաուղղված կիրառում:
4. Հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման գործում դպրոցի խորհրդակցական մարմին հանդիսացող՝ մանկավարժական խորհուրդն իր իրավասությունների շրջանակներում քննարկում և որոշումներ է կայացնում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը վերաբերվող բոլոր առանցքային հարցերի վերաբերյալ:
5. Մեթոդական միավորման գործունեությունն անհրաժեշտ է և կարևոր դեր ունի ուսումնական առարկաների դասավանդման մեթոդների կիրառման արդյունավետության, առանձին տեխնոլոգիաներին տիրապետելու, մանկավարժական գործունության խթանման, ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների կատարելագործման համար:
6. Հանրակրթական դպրոցի տնօրենը, որպես ուսումնական գործընթացի կազմակերպիչ, իրականացնում է մի շարք գործառույթներ,

որոնց նպատակային և ճշգրիտ իրականացմամբ է պայմանավորված դպրոցում ուսումնական գործընթացի հաջող ընթացքը:

7. Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի գործունեությունը բավականին պատասխանատու է և կարևոր, քանի որ այն կապված է դպրոցի ուսումնական և մեթոդական աշխատանքների ճիշտ ու արդյունավետ կազմակերպման և վերահսկողության հետ:

8. Հանրակրթական դպրոցում ուսուցչի կողմից նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառությունը դասապրոցեսը դարձնում է առավել հետաքրքիր ու բազմաբովանդակ, սովորողների հետաքրքրություններին համապատասխան, և նպաստում սովորողների մոտ ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:

9. Ներդպրոցական վերահսկողությունը հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքին զուգահեռ շարունակական գործընթաց է, որը հիմք է դառնում դպրոցում հետագա աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար:

10. Ուսուցիչների ատեստավորումներն ու վերապատրաստումները կարևոր նշանակություն ունեն կրթության որակի վերահսկողության և գնահատման տեսանկյունից:

11. Դասալսումները ուսումնամեթոդական աշխատանքների վերահսկողության կարևոր ձև են, որոնք օգնում են վերահսկել կրթության որակը և տանել այն շարունակական բարելավվման:

12. Ուսուցչի ինովացիոն տիպը ենթադրում է մի շարք պահանջներ, որոնք անհրաժեշտ են ժամանակակից ուսուցչին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Սահակյան, Ա. Ս. Մանկավարժություն, Ե. 2005, 446 էջ:
2. Առաքելյան Մ. «Առարկայական մեթոդական միավորումների գործունեության հիմնական ուղղությունները արդի պայմաններում», Մանկավարժական միտք ամսագիր, Տաթև Գիտակրթական համալիր, Երևան 2015թ. N 3, 248 էջ:
3. Ափոյան Ա. Է., Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, գիտական տեղեկագիր, 2014թ. N 1, 345 էջ:
4. Բալյան Ա.Ա., Սադյան Շ.Դ., Մանկավարժական էթիկա, Ե., 2001 , 197էջ:
5. Թոփուզյան Ա., «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», «Մանկավարժական միտք» հանդես, N3-4, Երևան 2012 թ., էջ 14:
6. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերզյան Գ., «Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում», Բարև հասարակական կազմակերպություն, Երևան 2013թ. էջ 29:
7. Կարապետյան Ա., Ասատրյան Լ.Թ., Կրթության համակարգի կառավարման հիմունքները, Ե., 2003 , 192 էջ:
8. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենք, 2005 թվականի մայիսի 25-ի որոշում, հոդված 5:
9. Հախվերդյան Ս.Ե., Հովհաննիսյան Վ.Հ., Կառավարման հիմունքներ, Ե., 1998, 228 էջ:
10. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր, 2011թվական, Երևան, էջ 5:
11. «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի Օրինակելի Կանոնադրություն, 2010թ. օգոստոս 5:
12. Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր:
13. «Հայաստանի հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Օրինակելի Կանոնադրություն, Գլուխ 5, կետ 91 ՀՀ կառավարության 2017թ.-ի հուլիսի 6-ի N 801 որոշում:

14. «Հանրակրթության մասին օրենք» հոդված 11-ի կետ 3:
15. «Հանրակրթության մասին օրենքը» 2009թ. հուլիսի 10, հոդված 4:
16. «Հանրակրթության մասին օրենք» հոդված 11-ի 1-ին կետ:
17. «Հանրակրթության մասին օրենք» հոդված 10, 5-րդ կետ:
18. «Հանրակրթության մասին օրենք» հոդված 3:
19. «Հանրակրթության մասին օրենք» 26 հոդված, 22 կետ:
20. Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, 2004, էջ17:
21. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց/ ՀՀ ԿԳՆ կազմ.՝ Գ. Մելիքյան, Ն. Մանուկյան, Վ. Սարգսյան.-Եր.: Կրթության ազգային ինստիտուտ, 2012 Պրակ IV. 240 էջ:
22. Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ. Սոցիալական մանկավարժություն, Հ.:-Եր., ԵՊՀ հրատ., 2017, 336 էջ:
23. Հարությունյան Ն. Կ., Տիգրանյան Ա., «ՀՀ կրթության համակարգը, նպատակը, խնդիրները», Մանկավարժական միտք, Երևան 2016, 12 էջ:
24. ՀՀ օրենքը Հանրակրթության մասին 2009 թվական հուլիսի 10, հոդված 10:
25. Հովհաննիսյան Ա.Ա., «Մենեջմենթի հիմունքներ», Երևան, 2015թ., 616 էջ:
26. Ղազարյան Ա., Դասախոսությունների փաթեթ 2020թ.:
27. Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն, Ե., 2005, 463 էջ: